



«Անկախ դիտորդ» հասարակական դաշինք

2022թ. սեպտեմբերի 25-ի ՏԻՄ ընտրություններ

ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՏ ԴԻՏԱՐԿՄԱՆ
ՄԻՋԱՆԿՅԱԼ ՁԵԿՈՒՅՑ
/31.08.2022-23.09.2022/

«Անկախ դիտորդ» հասարակական դաշինքը երկարաժամկետ և կարճաժամկետ դիտորդական առաքելություն է իրականացնում հետևյալ անդամ և գործընկեր կառույցների հետ.

- ~ Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ
- ~ Իրազեկ քաղաքացիների միավորում
- ~ Ուղղակի ժողովրդավարություն,
- ~ Գյումրու առաջընթաց,
- ~ «Ռեստարտ Գյումրի» /Գյումրու «Ռեստարտ նախաձեռնությունների կենտրոն» ՔՀԶ ՀԿ,
- ~ Կանանց իրավունքների տուն
- ~ Մարդու իրավունքների եզդիական կենտրոն

Երկարաժամկետ դիտարկումն իրականացվում է Պրահայի քաղաքացիական հասարակության կենտրոնի ֆինանսավորմամբ «Անկախ դիտորդ - տեղական ընտրություններ 2022» ծրագրի շրջանակներում:

Այս հրապարակման բովանդակության համար պատասխանատվություն է կրում Անկախ դիտորդ հասարակական դաշինքը, և պարտադիր չէ, որ այն արտահայտի ֆինանսավորող կազմակերպության տեսակետները:



Նախնական տեղեկատվություն

2022թ. սեպտեմբերի 25-ին Հայաստանի 18 համայնքներում տեղի կունենան ՏԻՄ ընտրություններ: Համայնքներից 17-ում համամասնական ընտրակարգով կընտրվի ավագանի, իսկ մեկում՝ մեծամասնական ընտրակարգով կընտրեն համայնքի ղեկավար և ավագանու անդամների:

«Անկախ դիտորդ» դաշինքը երկարաժամկետ դիտորդություն է իրականացնում 18 համայնքներից 17-ում:

2021թ. սեպտեմբեր-դեկտեմբեր ամսիներին 45 համայնքներում տեղի ունեցած ՏԻՄ ընտրությունները ցույց տվեցին, որ համամասնական ընտրակարգը կարող է նպաստել քաղաքական մշակույթի ձևավորմանը և հնարավորություն ստեղծել որոշ արտախորհրդարանական ուժերին զգալի ներկայացվածություն ունենալ ՏԻՄ մակարդակում: Այնուամենայնիվ, առանձին համայնքներում ընտրությունների արդյունքում ընտրված ավագանին չի կարողացել ընտրել համայնքի ղեկավար կամ ընտրությունը իրականացրել է այնպիսի պայմաններում, որոնք հանգեցրել են ավագանու լուծարմանը, տևական դատական գործընթացների, որոնցից մեկի արդյունքում էլ Վանաձոր համայնքում փաստացի չեն ձևավորվել տեղական ինքնակառավարման մարմինները: Այս դեպքերը ցույց են տալիս ՀՀ-ում ընդհանուր քաղաքական, դատական և ընտրական համակարգի խորքային խնդիրները, որոնք հանգեցնում են հետընթացի ժողովրդավարության սկզբունքներից: Վերոնշյալ խնդրային համայնքներից Թալին համայնքում սեպտեմբերի 25-ին տեղի են ունենալու նոր ընտրություններ:

«Անկախ դիտորդ» հասարակական դաշինքն իր դիտորդական առաքելությունը առաջիկա ընտրություններին ընդառաջ մեկնարկեց 2022թ օգոստոսի 31-ին, քարոզարշավի պաշտոնական մեկնարկի հետ միասին:

Անցած ժամանակահատվածում երկարաժամկետ դիտարկումն իրականացվել է 17 դիտորդի կողմից, որոնց հիմնական արձանագրումներն ամփոփված են ներկայացվող զեկույցում:

Դիտարկվել է թեկնածուների 42 հանդիպում 11 համայնքում: Այդ հավաքների ընթացքում իրականացվել են հարցազրույցներ 54 մասնակցի հետ: Իրականացվել են հարցազրույցներ 78 թեկնածուների և շտաբների 26 ղեկավարների հետ: Այս դիտարկումների ամփոփումները կներկայացվեն Առաքելության վերջնական զեկույցում:

Ընտրական օրենսդրություն

2022 թ. ՀՀ Ազգային ժողովի “Իմ Քայլը” խմբակցության առանձին պատգամավորներ նախատեսել էին ընտրական օրենսգրքի ծավալուն փոփոխություններ, որոնք վերաբերում էին, թե՛ տեղական ինքնակառավարման, թե՛ Ազգային ժողովի ընտրություններին: Ծահագրգիռ քննարկումների արդյունքում առաջարկվող փոփոխություններից առանձնացվել և 2022թ. հուլիսի 14-ին ընդունվել են միայն, ըստ իրենց, հրատապ կարևորություն ունեցող դրույթները, որոնց մի մասը կկիրառվեն 2022թ. սեպտեմբերի 25-ի ՏԻՄ ընտրությունների նկատմամբ:

Հուլիսի 14-ին ընդունված փոփոխություններով.

- Քվեարկության նույն կարգն է սահմանվել համամասնական ընտրակարգով բոլոր ընտրությունների համար անկախ ընտրողների թվից՝ յուրաքանչյուր կուսակցության/դաշինքի համար կիրառվում է առանձին քվեաթերթիկ, իսկ մեկ թեկնածուի դեպքում կիրառվում է՝ “Դեմ եմ” քվեաթերթիկ
- Ընտրություններին մասնակցող կուսակցությանը կամ դաշինքին վիճակահանությամբ տրվող համարը կիրառվում է այդ ընտրությունների ժամանակ բոլոր այն համայնքներում որտեղ տվյալ ուժն առաջադրված է
- Արգելվում է կուսակցության կամ դաշինքի անվանման մեջ անձնանուններ ու տեղանուններ կիրառել
- ԿԸՀ անդամների նկատմամբ պահանջները նվազեցվել են՝ համապատասխանեցվելով ՀՀ Սահմանադրությանը
- ԿԸՀ անդամների աշխատավարձերի գործակիցները վերանայվել են
- ՏԻՄ համամասնական ընտրությունների ժամանակ ևս նախատեսվում է տեսանկարահանում: Այս դրույթն ուժի մեջ կմտնի 2023 թվականից

Արդեն անցած տարի ուժի մեջ մտած փոփոխություններով նախատեսվեց կուսակցությունների ընտրացուցակներում խոշորացված համայնքների առնվազն 50 տոկոսից թեկնածուներ ներկայացնելու քվոտա, իսկ մեկ սեռի ներկայացուցիչների թիվը ընտրական ցուցակի ամբողջական թվով եռյակներում չի կարող գերազանցել 70 տոկոսը:

Ընտրական ցուցակի գրանցման համար կուսակցություններն ու դաշինքները կարող են ներկայացնել տվյալ համայնքի նախատեսվող ավագանու թվի $\frac{1}{3}$ -ի չափով թեկնածուներ: Եթե համայնքը բազմաբնակավայր է և բնակավայրերի 50 տոկոսի թիվն ավելի բարձր է, ապա կիրառվում է այդ թիվը:


Համամասնական ընտրակարգով ՏԻՄ ընտրությունների ժամանակ գործող ընտրական շեմը կուսակցությունների համար վավեր քվեների 4%-ն է, իսկ դաշինքների դեպքում 6%-ը: Օրենսդրությամբ երաշխավորված է ավագանու կազմում նվազագույն երեք կուսակցությունների/դաշինքների մանդատներ ստանալը, անկախ ընտրական շեմը հաղթահարելու հանգամանքից:

Մեծամասնական ընտրակարգով քվեարկության գործընթացում փոփոխություններ չեն եղել:

2022 թ. սեպտեմբերի 25-ի ՏԻՄ ընտրություններին մասնակցող քաղաքական կուսակցություններն ու դաշինքները

2022թ. սեպտեմբերի 25-ին համամասնական ընտրակարգով անցկացվող ՏԻՄ ընտրություններին մասնակցելու համար առաջադրվել է 11 դաշինք և 16 կուսակցություն: Արագածոտնի մարզի ճաղկահովիտ համայնքում թերի ներկայացված փաստաթղթերի պատճառով մերժվել է Նժդեհյան ցեղակրոն կուսակցության գրանցումը: Այսպիսով 17 համայնքում ՏԻՄ ընտրություններին մասնակցելու համար գրանցվել են 11 դաշինք և 15 կուսակցություն, որոնք առաջադրել են ընդհանուր 2025 թեկնածու: Այս թիվը դիտարկման ողջ ընթացքում սվազել է, քանի որ բազմաթիվ են եղել ինքնաբացարկները: Լոռու մարզի Գյուլագարակ համայնքում անվավեր է ճանաչվել Հանուն Ժողովրդի դաշինքի գրանցումը, քանի որ դաշինքի ընտրական ցուցակի 23 թեկնածուներից 19-ը ինքնաբացարկ են ներկայացրել՝ ինչի արդյունքում ներկայացված ընտրական ցուցակն այլևս չի համապատասխանել Ընտրական Օրենսգրքի սվազագույն պահանջներին:

Ընտրական Օրենսգրքի համաձայն մանդատների բաշխմանը մասնակցում են առնվազն 3 ուժեր եթե կան: Ըստ այդմ համայնքներից 12-ում ընտրվելու են առաջադրված բոլոր ուժերը՝ քվեարկության արդյունքում ձևավորված համամասնությամբ: Միայն 5 համայնքում ընտրությունները կլինեն մրցակցային: Միսիան համայնքում մրցակցությունն առավել բարձր է. այստեղ առաջադրված է 5 կուսակցություն և 2 դաշինք:



Արագածոտնի մարզի Ալագյազ համայնքում տեղի են ունենալու համայնքի ղեկավարի և ավագանու անդամի ընտրություններ: Համայնքի ղեկավարի թեկնածուները 2-ն են, իսկ ավագանու 9 տեղի համար պայքարում է 14 թեկնածու: Ավագանու անդամի 1 թեկնածու ինքնաբացարկ է հայտնել

Բոլոր համայնքների վերաբերյալ ամփոփ տվյալները հասանելի են [այստեղ](#):

Նախընտրական քարոզարշավի դիտարկումների ամփոփում

Չնայած ընտրություններին մասնակցելու հայտ ներկայացրած թեկնածուների ու կուսակցությունների մեծ թվին՝ այս ընտրությունների քարոզարշավն ընդհանուր առմամբ աչքի է ընկնում պասիվությամբ և հատկապես հրապարակային նախընտրական հավաքների սակավությամբ՝ փոխարենը նախընտրելով տնտուռն այցերը, բակային կամ անհատական հանդիպումները, որոշ դեպքերում աշխատանքային կոլեկտիվների հետ դահլիճային հանդիպումները: Տարբեր համայնքներում առաջադրված մի շարք ուժեր (թե «ընդդիմադիր», թե «իշխանական» ճամբարներից) խուսափել են համագործակցել դիտորդների հետ՝ տեղեկություններ տրամադրելու հարցերում: Քարոզարշավի առաջին տասնօրյակում կուսակցությունները հիմնականում զբաղվում էին նախապատրաստական աշխատանքներով, սակայն այդ աշխատանքներն ու քարոզչությունն ըստ էության առկախվեցին սեպտեմբերի 12-13-ի գիշերը ՀՀ տարածք ադրբեջանական ուժերի ներխուժման պատճառով:

Ադրբեջանական հարձակումն օրինաչափորեն էական ազդեցություն ունեցավ նախընտրական քարոզարշավի ընթացքի վրա: Բոլոր քաղաքական ուժերը, սեպտեմբերի 12-15-ին դադարեցրեցին քարոզարշավը՝ հիմնականում հայտարարելով դրա մասին սոցիալական ցանցերում և մեդիայում: Ազրեսիայի պատճառով ռազմական դրության հայտարարման և ընտրությունների չեղարկման հավանականությունը էապես ազդեցին քարոզարշավի հետագա ընթացքի վրա:

Ադրբեջանի կողմից ՀՀ տարածքի վրա հարձակման արդյունքում ընդհատված քարոզչությունը որոշակի իմաստով, այլ դրսևորումներ ունեցավ՝ թեկնածուների կամ քաղաքական ուժի տեսանելիությունը ապահովելու համար: Մրցակցող քաղաքական ուժերի այդ ժամանակահատվածում առավելապես զբաղվեցին ոչ ֆորմալ ջոկատների ստեղծմամբ, որոշակի մասնակցություն ունեցան աշխարհագրորային խմբերում, պաշտպանական շինարարական աշխատանքների իրականացմամբ, զինված ուժերի կարիքների համար պարենային և այլ ապրանքների հավաքագրմամբ և տեղափոխությամբ:

Դռնեդուռ այցելությունների ընթացքում, որոնք գրեթե բոլոր համայնքներում եղել էին քարոզչության հիմնական ձևը, թեկնածուներն անդրադարձել են ազրեսիայի արդյունքում զոհված կամ վիրավորված զինծառայողների ընտանիքների խնդիրներին: Առանձին համայնքներում դիտորդները նկատել են այլ մոտեցում. քարոզարշավի տեղափոխություն համայնքից՝ Երևան քաղաքի Բաղրամյան պողոտա: Մասնավորապես Բերդ, Արենի, Եղեգիս, Սիսիան և Քաջարան համայնքներում անվտանգության հետ կապված միջոցառումների անցկացումը ունեցել է նկատելի քաղաքական ազդեցություն, միևնույն ժամանակ առավել նկատելի է եղել առանձին ուժերի տեսանելի մասնակցության բացակայությունը:

Դաշինքի տեղեկություններով բուն ընտրությունների կազմակերպման անվտանգության հետ կապված որևէ աշխատանքներ չեն իրականացվել պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից: Հարձակման թիրախ դարձած Սիսիան համայնքի Իշխանասար և Նորավան գյուղերի բնակչությունը գտնվում է այդբնակավայրերում, տեղամասերը բացվելու են ըստ նախատեսված ժամանակացույցի:

Մի շարք համայնքներում, առաջադրված ուժերից որոշները չեն ունեցել նախընտրական շտաբներ կամ ունեցել են շտաբային տարածքներ, որոնք փաստացի չեն գործել: Մասնավորապես ՀՀԴ-ն Ալավերդիում, «Արժանապատիվ սերունդ» դաշինքը Բերդում, Կայունություն կուսակցությունը Թալինում, Հանրապետություն կուսակցությունը Լոռի բերդում, ԶԳ-ն և Հանրապետությունը Արենիում:

Որոշ քաղաքական ուժերի պասիվությունը ընտրություններին իրենց իսկ կողմից բացատրվում է կամ պայմանավորված է ավագանու կազմում հայտնվելու երաշխավորված հավանականությամբ (երբ

մրցակցում են 3 կամ պակաս քաղաքական ուժեր), կամ այլ, ավելի ազդեցիկ կուսակցության/դաշինքի թեկնածուին համայնքի ղեկավարի պաշտոնում ընտրելու/կոալիցիա ձևավորելու նպատակով առաջադրված լինելու հանգամանքով: Այս մարտավարությունը ավելի շատ օգտագործում են ընդդեմ ՔՊ-ի միավորման մտադրությամբ առաջնորդվող կուսակցություններն ու դաշինքները:

Օրինակ՝

Բերդ համայնքում նման «կանխատեսելի համագործակցությունը» արտահայտվել է «Արժանապատիվ սերունդ» դաշինքի անդամների կողմից «Չորավոր համայնք» դաշինքի նախընտրական հանդիպումներին և քարոզչությանը ուղղակի մասնակցելով: Եղեգիս համայնքում նման պայմանավորվածությունն ունեն Վերելք և Ագատական կուսակցությունները: Ի դեպ Վերջինիս իր աջակցությունն է ցուցաբերում ԱԺ-ում ՔՊ խմբակցության պատգամավոր Սերգեյ Բագրատյանը:

Այս գործընթացներն իրենց էությամբ քաղաքական են և ընտրական օրենսդրության որևէ դրույթ չեն խախտում, սակայն կրկին ակնհայտ են դարձնում, որ համամասնական ընտրակարգը կուսակցությունների մեծամասնության կողմից դեռևս չի դիտարկվում որպես կուսակցությունների գաղափարական մրցակցության և համայնքային մակարդակում իրենց հանրային քաղաքականությունների տեղայնացման հնարավորություն: Ավելին՝ մի շարք դեպքերում թեկնածուները չեն թաքցնում, որ որևէ առնչություն չունեն իրենց առաջադրող կուսակցության հետ, այլ ուղղակի օգտագործում են այդ ձևաչափն ընտրությունների մասնակցելու համար:

Օգտվելով Ընտրական օրենսգրքում վարչական ռեսուրսի չարաշահման¹ դեմ կարգավորումների սահմանափակությունից՝ օրինականության եզրին են քարոզարշավ իրականացնում ըստ էության բոլոր այն ուժերը, որոնք տիրապետում են որևէ, թեկուզ չնչին վարչական ռեսուրսների: Դիտարկման ընթացքում արձանագրվել են թե՛ ընտրողների նկատմամբ ճնշումներ, թե՛ տարբեր ուժեր ներկայացնող պետական, համայնքային պաշտոնյաների քարոզարշավի մասնակցությունը, թե՛ սոցիալական ցանցերում համայնքների «պաշտոնական»² էջերով ակտիվ քարոզչություն, թե՛ սոցիալական աջակցության ու պետական ու համայնքային ծրագրերի չարաշահում:

Օրինակ՝

Արագածոտնի մարզում Ծաղկահովիտում, աշխատանքային ժամերի և ծառայողական մեքենայով քարոզարշավի է մասնակցել Քաղաքացիական պայմանագիր կուսակցության ներկայացուցիչ մարզպետը, իսկ մարզպետարանի Կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետը ոչ միայն ակտիվ մասնակցել է քարոզարշավին, այլև Գեղադիր բնակավայրում աշխատանքային ժամին քարոզչությամբ է զբաղվել դպրոցում:

Նույն մարզի Ալազյազ համայնքից ահագանգ է ստացվել, որ գործող համայնքի ղեկավար անկուսակցական Ջասս Մահմուդովը համայնքի մեջ ներառված բնակավայրերի մեծ մասի դպրոցների տնօրենների միջնորդությամբ ընտրողների վրա ճնշում գործադրելու փորձեր է կատարում և ընտրակաշառքի հարող հակաօրինական խոստումներ տալիս:

¹ Ընտրական օրենսգիրք, Զոդված 23, մաս 1-ին

² Ըստ էության խոսքը գնում է համայնքապետարանի աշխատակազմի կողմից վարվող Facebook սոցիալական ցանցում համայնքի համայնքապետարանի էջերի մասին, որոնց կառավարումը իրականացվում է իբրև աշխատանքային պարտականություն՝ համայնքային պաշտոնական կայքերին զուգահեռ:

Կոտայքի մարզի Ակունք համայնքի Չառ գյուղի համայնքապետարանում աշխատանքային ժամին բացակայող աշխատակիցները ըստ էության ամբողջությամբ ներգրավված են եղել Համախմբում դաշինքի (որի անդամն է Բարգավաճ Հայաստան կուսակցությունը) քարոզչական աշխատանքներին:

Լոռու մարզի Գյուլագարակ համայնքում համընկել են ԶՊ կուսակցության քարոզչական հանդիպումն ու Լոռու մարզպետի աշխատանքային այցը՝ որին մասնակցության նպատակով համայնքի բնակավայրերի յուրաքանչյուր դպրոցի հանձնարարվել է հանդիպման համար ապահովել 5-ական մասնակից:

Ընդհանուր առմամբ նկատվում է մարզպետների ակտիվ ներգրավում քարոզչության մեջ՝ ոչ աշխատանքային ժամերին և օրերին, սակայն վիճելի է, թե նրանց ուղեկցող մարզպետարանների աշխատակիցների ներգրավումը նախընտրական հանդիպումներին:

Վարչական ռեսուրսների չարաշահումն արտահայտվում է նաև աշխատանքային իրավունքների ոտնահարմամբ՝ հատկապես աշխատանքից ազատելու սպառնալիքներով: Որոշ դեպքերում թեկնածուներին առաջադրած կուսակցության կոշտ արձագանքի և իրավագիտակից մոտեցման դեպքում սպառնալիքները չէին անցնում գործողությունների, սակայն Անկախ դաշինքին հայտնել են խորհրդապահական տվյալներ, որ ինքնաբացարկների որոշ դեպքեր պայմանավորված են աշխատանքից անհիմն հեռացնելու սպառնալիքներով, եղել են նաև աշխատանքից ազատելու դեպքեր, սակայն որոնց մասին տուժածները չեն համարձակվում բարձրաձայնել:

Ինքնաբացարկ ներկայացնելու պահանջի առավել տեսանելի զոհեր են դարձել դպրոցների, մանկապարտեզների, բժշկական հաստատությունների աշխատակիցները:

Ակներն է, որ այս ընտրություններին ինքնաբացարկի պահանջով սպառնալիքներն ու ճնշումները ավելի հաճախ են տեղի ունենում, քան նախորդ աշնան ՏԻՄ ընտրություններին, միաժամանակ, դեռևս հրաժարվելով սեփական իրավունքները իրավական հարթության մեջ պաշտպանելուց, թեկնածուները կամ նրանց կուսակիցները առավել հակված են այդ դեպքերի մասին դիտորդներին կամ լրագրողներին միայն տեղեկացնելուն, ինչը դարձնում է բարձրաձայնումը քարոզչության կամ հակաքարոզչությանը նմանվող քաղաքական պնդում: Սա վտանգավոր միտում է, որը կարող է հանգեցնել քաղաքական ճնշումների մշակույթի արմատացմանը՝ նոր ձևավորվող համամասնական ընտրակարգով ձևավորվող ավագանիների պարագայում:

Հարկ է նշել, որ հասարակական կազմակերպությունների և ՉԼՄ-ների գործիքակազմը չի կարող բավարարել այս գործելակերպին դիմադրելուն՝ առանց կոնկրետ դեպքերի վերհանման և պահանջում է մի կողմից խախտման մասին վկայություն տալու պատրաստակամություն, մյուս կողմից պատշաճ մարմինների նախաձեռնողականություն և հետևողականություն:

Օրինակ՝

Ճիրակի մարզի Անի խոշորացված համայնքից ստացվել է տեղեկություն առ այն, որ աշխատակիցներից մեկին սպառնացել են ազատել աշխատանքից, եթե չաջակցի ԶՊ-ին:

Նույնաբովանդակ տեղեկատվություն է փոխանցել նաև Ապրելու երկիր կուսակցության ներկայացուցիչը՝ Լոռու մարզի Գյուլագարակի մանկապարտեզի բուժքրոջ հետ կապված:

Ինքնաբացարկների հետ կապված առավել խնդրահարույց և ընդհանուր տրամաբանությունից դուրս է Լոռու մարզի Գյուլագարակ համայնքում առաջադրված «Հանուն ժողովրդի» դաշինքի դեպքը: Դաշինքի 23 գրանցված թեկնածուներից 19-ը ներկայացրել են ինքնաբացարկներ, ինչի

արդյունքում դաշինքի գրանցումը անվավեր է դարձել: Չնայած նրան, որ դաշինքը համայնքում առաջադրված երեք ուժերից մեկն էր և երաշխավորված ընդգրկվելու էր ավագանու կազմում, ցուցակը առաջնորդող թեկնածուն, ով ինքնաբացարկի դիմում չի ներկայացրել արդարացնում է կուսակիցների որոշումը՝ պնդելով, որ այն իրենց հնարավորությունների գնահատման արդյունք է, և որևէ կողմի ճնշման արդյունք չէ:

Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի մանկապարտեզի տնօրենը համայնքի ղեկավարի կողմից ստացել է գրավոր նկատողություն, իսկ մանկապարտեզում սկսվել են ստուգումներ: Ըստ ստացված տեղեկատվության՝ սա տեղի է ունեցել այն բանից հետո, երբ տնօրենը հրաժարվել է «Միասնություն» դաշինքի (փաստացի ԲՀԿ) ցուցակում ներառվելուց, իսկ նրա ամուսինը գլխավորել է Արդար Չայաստան կուսակցության ցուցակը:

Քաղաքական ֆինանսավորման վերահսկելիության գնահատման արդյունքում ակնհայտ է դառնում, որ Չամատարած են դեպքերը, երբ կուսակցությունների/դաշինքների ներկայացուցիչները ընդհանրապես տեղեկացված չեն իրենց նախընտրական հիմնադրամների գոյության մասին և նշում են, որ քարոզչության հետ կապված ծախսերը իրականացնում են կանխիկ եղանակով, հաճախ սեփական միջոցներից:

Ինչպես նախորդ ընտրությունների նախընտրական շրջանում, այժմ ևս բազմաթիվ են դեպքերը, որոնք առնչվում են նախընտրական պաստառների, քարոզչանյութերի վնասման, ոչ սահմանված վայրերում փակցնելու հետ: Այս, արդեն սովորական դարձած խնդրից բացի մի շարք համայնքներում նկատվել նաև ավելի համակարգային երկու խնդիր. համայնքի ղեկավարները քարոզչական պաստառների փակցման համար տրամադրում են վայրեր, որոնք հակասում են Ընտրական օրենսգրքով սահմանված կարգավորումներին. խանութների, դպրոցների, վարչական շինությունների պատերի մակերեսները: Մյուս կողմից որոշ կրկնակի խոշորացվող համայնքների ղեկավարները չեն տրամադրել որևէ տարածք, պնդելով, թե համայնքի/բնակավայրի տարածքում նպատակահարմար տարածքներ չկան:

Բացի ընդհանուր ահազանգերից՝ գրավոր արձանագրված դեպքերից.

- 11 դեպք առնչվում է չսահմանված վայրերում քարոզչական պաստառներ փակցնելուն,
- 3 դեպք ընտրողների նկատմամբ ճնշում գործադրելուն,
- 8 դեպք վարչական ռեսուրսի այլ կիրառման,
- 3 դեպք քաղաքական պատճառներով աշխատանքից ազատելու սպառնալիքի,
- 12 դեպք քարոզչական պաստառների վնասման,
- 1 դեպքում ՏԻՄ-ը հավասար պայմաններ չի ստեղծել քարոզչություն իրականացնելու համար: «Միասնական համայնք» դաշինքը դիմել է Մեծավանի համայնքապետարան՝ Միխայելովկա բնակավայրի մշակույթի տան դահլիճում հավաք անցկացնելու նպատակով: Սակայն ստացել են բանավոր մերժում՝ սեղան-աթոռների բացակայության պատճառաբանությամբ: Այդ դահլիճը ներառված է անվճար հիմունքներով քարոզարշավ անցկացնելու վայր:

Դիտարկումների ընթացքում ընտրական օրենսդրության խախտումների վերաբերյալ Դաշինքի կողմից իրականացվել են հետևյալ գործողությունները.

- Թեկնածու հանդիսացող համայնքների և մարզպետարանների աշխատակիցների վերաբերյալ հարցումներ են ուղարկվել համապատասխան համայնքապետարաններին և մարզպետարաններին՝ այդ անձանց արձակուրդում գտնվելու կամ չգտնվելու վերաբերյալ պարզաբանում ստանալու նպատակով:
- Ոչ սահմանված վայրում քարոզչական պաստառ փակցնելու 9 դեպքով 3 գրություններ են ուղարկվել համապատասխան համայնքների ղեկավարներին՝ դրանք հանելու պահանջով:
- Քարոզչական տպագիր նյութի պատվիրատուի, տպագրող կազմակերպության և տպաքանակի վերաբերյալ տեղեկություններ չպարունակող 9 քարոզչական պաստառներ հանելու և վարչական իրավախախտում կատարած անձանց վարչական պատասխանատվության ենթարկելու նպատակով վարչական վարույթ հարուցելու հարցերով 1 դիմում է ներկայացվել ԸԸՀ:
- ՏԸՀ անդամի կողմից նախընտրական քարոզչություն իրականացնելու և քարոզչական նյութեր տարածելու դեպքով 1 դիմում է ներկայացվել ԸԸՀ՝ ՏԸՀ անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու հարցը քննարկելու և վարչական պատասխանատվության ենթարկելու հարցերով:

Twitter: @IndObserverArm

Telegram: <https://t.me/AnkakhDitord>

Facebook: @Անկախ դիտորդ - Independent Observer

E-mail: independentobserverarm@gmail.com